«ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի հունիսի 17-ի ՀՕ-122-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«2. Սույն օրենքը, ինչպես նաև սույն օրենքով սպառողին վերաբերվող բոլոր դրույթները տարածվում են նաև մինչև 5.000.000 (ներառյալ՝ 5.000.000 ՀՀ դրամը) դրամ գումարի չափով և (կամ) դրան համարժեք արտարժույթով տրամադրված գյուղատնտեսական նշանակության և «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» 05 դեկտեմբերի 2000 թվականին ընդունված ՀՕ-121 օրենքով սահմանված՝ գերփոքր, փոքր և միջին ձեռնարկատիրություններին (այսուհետ նաև՝ ՓՄՁ սուբյեկտ) տրամադրված կրեդիտների վրա, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենքով և/կամ այլ իրավական ակտերով։»։.....